

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ
ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ
(2015-2019)

Ահաւաստիկ շուրջ ութ տարիներ անցած են Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի նորոգութեանց թուականէն (Յուլիս-Դեկտեմբեր, 2015): Այսօր տարիներու հեռուն կարեւոր եւ անհրաժեշտ կը նկատենք այդ նորոգութեանց ընթացքի եւ հետեւանքներու մասին պատմութեան համար իբրեւ արձանագրութիւն ժամանակագրական կարգով տեղեկագիր¹ մը ներկայացնել «Սիոն»-ի մեր ընթերցողներուն, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Հայ հասարակութեան:

10 Յունիս, 2015.- Տնօրէն ժողովի որոշմամբ յատուկ Միաբանական Ընդհանուր Ժողով մը գումարուեցաւ՝ օրակարգի նիւթ ունենալով «Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի վերանորոգութեան եւ այդ նպատակին համար յատկացուելիք պիւտճէի՝ 1.5 մլն շէքէլ ծախսի վաւերացման» հարցը: Միաբանական Ընդհանուր Ժողովը քուէներու մեծամասնութեամբ վաւերացուց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի վերանորոգման եւ յատկացուելիք պիւտճէի հարցը:

Հաշուի առնելով Մայր Տաճարի 12-րդ դարու հին ճարտարապետական կառոյց ըլլալու փաստը՝ Միաբանական Ընդհանուր Ժողովի ընթացքին առաջարկեցի, որ Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքներու ընթացքը վերահսկէ Հայ հնագէտ ճարտարապետ մը: Օրուան Կալուածոց տեսուչ՝ Տ. Պարեոս Ծ. Վարդապետ Երէցեան (այժմ կարգալոյծ) ըսաւ, թէ այդ վերահսկողութիւնը պիտի կատարէ իտալացի ճարտարագէտ՝ Լէոնարտօ Տի Մարօ եւ ճարտարապետ Ֆիլիպ Տահապրի:

Իտալացի ճարտարագէտէն զատ Միաբանական Ընդհանուր Ժողովը նշանակեց նաեւ Միաբան Հայրերէ բաղկացած հսկող յանձնախումբ մը՝ գլխաւորութեամբ Լուսարարապետ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեանի եւ անդամներ՝ Տ. Պարեոս Ծ. Վարդապետ Երէցեանի, Տ. Բարսեղ Վարդապետ Գալէմտէրեանի, Տ. Նորայր Վարդապետ Գազազեանի (այժմ Տէր Հայր յԱմերիկա), եւ Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեանի:

12 Յունիս, 2015.- Վանքի դրան Յայտարարութեան տախտակին վրայ ծանուցում դրուեցաւ, թէ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի նորոգութեանց պատճառով 15 Յունիս, 2015-էն սկսեալ պաշտամունքները պիտի կատարուին Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ:

15 Յունիս, 2015.- Վերանորոգութեան համար տեղեկագրիս հեղինակին, որպէս Մայր Տաճարի Աւագ Լուսարար, տրուած էր գրեթէ 15 օր՝ Մայր Տաճարը եւ Սուրբ Էջ-

¹ Սոյն տեղեկագիրը պատրաստելու արտօնութիւն ստանալու նպատակով՝ 12 Յունիս, 2017 թուակիր նամակով դիմած եմ Սուրբ Աթոռոյ Տնօրէն Ժողովին: 13 Յուլիս, 2017 թուակիր նամակով ստացած եմ Տնօրէն Ժողովի ԻԱ (21) նիստին որոշումը, որով կ'արտօնուէր ինձի պատրաստել 2015 թուականին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի նորոգութեան տեղեկագիրը եւ յանձնել «Սիոն»-ի խմբագրութեան:

միաժին Եկեղեցին պարպելու համար: Նախ խորհրդակցեցայ կարգ մը Միաբան Հայրերու եւ մանաւանդ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ՝ Տ. Թէոդորոս Վարդապետ Զաքարեանի հետ, որու արտօնութեամբ Ժառանգաւոր սաներն իրականացուցին Մայր Տաճարի կահկարասիի, սպասներու, իրերու փոխադրումը իրենց յատկացուած տեղերը՝ հերթականութեամբ: Մինչ այդ օգնականիս՝ ծառայող միաբան Լեւոն Պօղոսեանին հետ կանոնաւոր կերպով բոլոր իրերը դասաւորած էինք սնտուկներու մէջ եւ ի պահ դրած պահարաններու մէջ (**Նկ. 1, 2**): Այս դժուարին եւ պատասխանատու աշխատանքներու ընթացքին Մայր Տաճարի կարուհի՝ Տիկին Լարիսա Սարգսեան պատրաստեց եւ կարեց գահերու եւ մեծ վարագոյրներու չարխերու համար յատուկ ծածկոցներ:

Փոխադրման աշխատանքները վերջացան 1 Յուլիս, 2015-ին:

29 Յունիս, 2015.- Վերանորոգման աշխատանքներու համար Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի արտաքին գաւիթի եւ Սուրբ Էջմիածնի հարաւային պատին՝ Մեծ Բակին կողմէ երկաթեայ յենակներ դրուեցան եւ յատուկ գօտիներ ստեղծուեցան (**Նկ. 3, 4**):

1-10 Յուլիս, 2015.- Սկսան երկաթեայ յենարաններու լարումները Մայր Տաճարի արտաքին գաւիթի, ներքին գաւիթի, վերնատան մէջ եւ Սուրբ Էջմիածնի դուրսի պատի հարաւային կողմը: Յատուկ ստուարաթուղթերով եւ նելոններով ծածկեցին նաեւ ներքին գաւիթի եւ Սուրբ Էջմիածնի իւզանկարները:

11 Յուլիս, 2015.- Կապալառու Ճորճ Բալուտի հսկողութեան ներքեւ սկսան Սուրբ Էջմիածնի տանիքի սալաքարերը քակելու եւ հողը պարպելու աշխատանքները: Հողի պարպման աշխատանքները շարունակուեցան ողջ Յուլիս ամսուայ ընթացքին եւ շուրջ 1-1.80 մեթր խորութեամբ հող պարպուեցաւ: Տանիքի արտաքին մերկ քարերը յատուկ սպիտակ սիմենթ շաղախով «քօլէ» ըրին: Յաջորդաբար ծածկեցին մօտ 50-60 սմ հողով եւ վրան դրին յատուկ ծածկ մը խոնաւութեան դէմ: Այս յատուկ նիւթը եւ զինկապատ յենարանի եւ շրջանակի յատուկ պողպատէ երկաթները դժբախտաբար ուշ հասան՝ Հոկտեմբերի սկիզբը (**Նկ. 5, 6**):

Օգոստոս ամսուայ ընթացքին կատարուեցան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի եւ Սուրբ Ստեփանոսի մատրան տանիքներու, Առաքելոց մատրան բակի եւ յարակից արտաքին պատերու (**Նկ. 7**), Մայր Տաճարի հիւսիսային եւ արեւելեան արտաքին պատերու ճեղքերու լիցքը (քօլէ): Նորոգուեցան նաեւ Սուրբ Ստեփանոսի մատրան տանիքի երկու պատուհանները, Մայր Տաճարի հիւսիսային կողմի անձրեւաշուրերը հեռացնող խողովակները²:

Սեպտեմբերի 14-էն ետք Սուրբ Էջմիածին Եկեղեցւոյ հարաւային կողմի արտաքին պատի կամարներուն ծեփերը վար առնուեցան, եւ տեսանք, որ այդ ծեփին տակ եղող պատերն ամբողջութեամբ կանոնաւոր քարերով չէր պատուած՝ միայն վարի մասը, իսկ վերի մասը մանր քարերով եւ հողով ամրացուած էր: Պատին վարի մասը կանոնաւոր «քօլէ» ծեփեցին, իսկ վերի բաժնին մէջ նոր քարերով պատ շինեցին՝ «քօլէ» ծեփով:

17-20 Սեպտեմբեր, 2015.- Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի վերնատան արեւմտեան կողմի եւ մեծ գմբէթի պատուհաններու երկաթեայ շրջանակները, մեծ զանգակատան գմբէթի երկաթեայ յենարանները սրճագոյն ներկուեցան, իսկ նոյն զանգա-

² Մայր Տաճարի հիւսիսային կողմի անձրեւաշուրերը հեռացնող խողովակներու վնասուած ըլլալուն պատճառով Սուրբ Մակարի դասի առաստաղէն ներս խոնաւութիւն թափանցած եւ վնասած է:

կատան «պէթոնէ» գմբէթը «պատանա» ներկուեցաւ (Նկ. 8): Դժբախտաբար անոր մեծ երկաթեայ քառաթեւ խաշը չներկուեցաւ: Մասնակի նորոգութեան ենթարկուեցաւ Մայր Տաճարի կեդրոնական մեծ գմբէթը դուրսէն: Ներկուեցան նաեւ Առաքելոց եւ Համբարձման մատուռներու երկաթեայ դռները, անոնց վերեւ, դուրսի կողմէն, հին երկաթեայ ծածկերը հանուեցան եւ փոխարինուեցան նոր՝ չժանգոտող պողպատէ ծածկերով, իսկ բակի պէթոնածածկ պատերը բաց վարդագոյն ներկուեցան (Նկ. 9):

28-30 Տեպտեմբեր, 2015.- Գործաւորները Սուրբ Էջմիածնի տանիքին վրայ յատուկ զինկապատ պողպատէ յենարաններ դրին եւ կապեցին: Այդ ընելու համար ծակեր փորեցին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի հարաւային պատին մէջ եւ Սուրբ Պօղոս մատրան մօտ քանի մը յախճապակիներ վնասուեցան (Նկ. 10):

7 Հոկտեմբեր, 2015.- Տակաւին Սուրբ Էջմիածնի տանիքի աշխատանքները ընթացքի մէջ էին՝ միայն հողով ծածկուած էր: Այդ օրուան սկիզբը նաեւ Ս. Յակոբի վերնատան տանիքի³ սալաքարերը, որ նախապէս քակուած էին տանիքը նորոգելու համար, «պէթոնով» պէտք եղած ծեփերը ընելէ ետք վերաշարեցին (Նկ. 11): Գործաւորները երբեմն անտարբեր, երբեմն անփոյթ վերաբերմունք կը դրսեւորէին մեր սրբութեանց նկատմամբ. օրինակ վերնատան մէջ խոշոր պահարան մը կար, որու ետեւը չներկեցին:

16-17 Հոկտեմբեր, 2015.- Վերջապէս Սուրբ Էջմիածնի տանիքի աշխատանքները հասան վերջին հանգրուանին. ամբողջացուցին զինկապատ պողպատէ յենարան երկաթներու զօդելու, փակցնելու, խոնաւութեան դէմ խճաքար թափելու, նելլոնով պատելու, երկաթեայ ցանցեր լարելու եւ ապա «պէթոնէ» ծածկ թափելու աշխատանքները: Պողպատէ յենարան երկաթները դրած ժամանակ, շրջանակի մէջ եղող հորիզոնական ձողերը քիչ թուացին ինծի: Պատասխանատուին հարցուցի «Արդեօք այդ երկաթէ ձողերը բաւակա՞ն են»: Պատասխանը եղաւ «Այո՛»:

Սուրբ Էջմիածնի տանիքը մինչ սոյն նորոգութիւնը անձրեւաջուրներու հեռացման համար մէկ ջուրի ճամբայ ունէր, իսկ տանիքի շինարարութեան ընթացքին աւելցուցին եւս մէկ ճամբայ:

19 Հոկտեմբեր, 2015.- Առաւօտեան նկատեցի, որ գործաւորները Սուրբ Էջմիածնի տանիքի նոր ըրած «պէթոնը» խոշոր գալլիկոնով կտրելով կը փորէին չորս անկիւններէն եւ այլ միացման տեղերէն՝ նոր յաւելեալ պողպատէ սալիկներ դնելու նպատակով (Նկ. 12): Համաձայն ճարտարագէտ Լէոնարտօ Տի Մարկոյի նախապէս չէր որոշուած սոյն յաւելումը:

Անընդունելի է կատարուածը: Երբ շաբաթներով տանիքը բաց էր, ինչո՞ւ այդ չէր մտածուած: Մեր կարծիքով շինարարական մեծ սխալ մըն էր եղածը, որը վստահաբար յետագային պիտի վնասէ եւ տկարացնէ Եկեղեցւոյ կառոյցը:

Մայր Տաճարի հարաւային պատի արտաքին պատուհանները, որ կը բացուին դէպի Սուրբ Էջմիածնի տանիք՝ հինցած էին, հետեւաբար փոխարինուեցան նոր ալիւմինէ պատուհաններով, ինչպէս նաեւ Սուրբ Էջմիածնի ներքին փայտեայ հին պատուհանները՝ նոր ալիւմինէ պատուհաններով:

26 Հոկտեմբեր, 2015.- Օրերս կապալառու Ճորճ Բալուտ խօսակցութեան մը ընթացքին ըսաւ, թէ Սուրբ Ստեփանոսի մատրան առաստաղը եւ ներքնամասը միայն պիտի ներկեն՝ առանց ծեփերը նորոգելու: Առարկեցի իրեն ըսելով՝ թէ ծեփերն ալ պէտք է

³ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի վերնատան տանիքը կառուցուած է 1835 թուականին:

վար առնուին եւ վերջը նորոգութիւն կատարուի: Ան պատճառաբանեց, թէ «պիւտճէի» մէջ չէ ներառուած ատիկա: Մեր առարկութիւնը յայտնեցինք նաեւ Կալուածոց Տեսուչ՝ Տ. Պարետ Մ. Վարդապետ Երէցեանին եւ առաջարկեցինք Սուրբ Ստեփանոսի մատրան նորոգութիւնը յետաձգել ապագային կանոնաւոր եւ ամբողջական նորոգութիւն կատարելու նկատառումով:

Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը եւ Սուրբ Էջմիածին Եկեղեցին ներսէն եւ դուրսէն տակաւին նորոգութեանց մէջ են եւ Տնօրէն Ժողովը յանկարծ մէջտեղ կը բերէ Գանձատան նորոգութեան հարցը: Կապալառուն կ'ըսէ, թէ Սուրբ Ստեփանոսի մատրան ծեփերը վար առնելու եւ նորոգութիւն ընելու «պիւտճէ» չկայ, իսկ Տնօրէն Ժողովը չեմ գիտէր ի՞նչ տրամաբանութեամբ կ'որոշէ նորոգել Գանձատունը: Ես, որպէս Մայր Տաճարի Աւագ Լուսարար եւ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան չհամաձայնեցանք սոյն որոշման:

31 Հոկտեմբեր, 2015.- Գործաւորները կը շարունակեն Սուրբ Էջմիածնի տանիքի սալաքարումը, իսկ Սուրբ Յակոբի վերնատան տանիքի սալաքարումն արդէն աւարտած են, այժմ կը կատարեն «քօլէ» ծեփապատումը (**Նկ. 15**):

2 Նոյեմբեր, 2015.- Կապալառու Ճորճ Պալուտին հսկողութեամբ գործաւորները սկսան Մայր Տաճարէն ներս երկաթեայ յենարաններ լարել՝ առաստաղին վրայ աշխատանքներ կատարելու համար:

Նոյեմբերի սկիզբը, Մայր Տաճարի առաստաղի մասնակի նորոգման աշխատանքներուն զուգընթաց կը կատարուին նաեւ Սուրբ Էջմիածին Եկեղեցւոյ ներքնամասի շաղախի ծեփման աշխատանքները: Մայր Տաճարի արեւմտեան կողմի՝ Սուրբ Մակարի դասի կողմէն դէպի հարաւային կողմը առաստաղի հին ծեփերը վառ առնուեցան եւ նոր ծեփով պատուեցան: Կամարներէն վար մինչեւ մեծ իւղանկարներու վրայի «քորնիշի» սահմանի վրայ ծեփերը եւս վար առնուեցան: Հիւսիսային եւ հարաւային կողմերը եղող պատերու վրայ ծեփերու տակէն երեւան եկան հին խաչքարեր⁴ (**Նկ. 13**):

Մայր Տաճարի ծեփերու աշխատանքները վերջանալէն յետոյ կատարուեցաւ նաեւ անոր առաստաղի ընդհանուր ներկումը: Արեւմտեան կողմի հին կրէ զարդարանքի տեղը նոր մը շինուեցաւ հայ արուեստագէտներու կողմէ:

Այս շրջանին կատարուեցան նաեւ Սուրբ Էջմիածին Եկեղեցւոյ ներքնամասի ծեփման եւ ներկման աշխատանքները: Կրէ զարդարանք մը շինուեցաւ նաեւ Սուրբ Էջմիածնի ատեանի ելեկտրական ջահին վերը՝ առաստաղին վրայ: Աշխատանքներէն ետք կը տեղադրուի նաեւ սոյն ելեկտրական ջահը (**Նկ. 14**):

8 Նոյեմբեր, 2015.- Կալուածոց Տեսուչ եւ նորոգութեանց պատասխանատու Տ. Պարետ Մ. Վարդապետ Երէցեան մէկ ամիսով մեկնեց Ամերիկա: Օգնականիս՝ Լեւոն Պողոսեանին արձակուրդը եւս զուգադիպեցաւ այս ամսուն, հետեւաբար մինակս ամէն առտու եւ երեկոյեան, որոշեալ ժամերուն կը բանայի Եկեղեցւոյ դռները եւ կարելի եղածին չափով կը հսկէի աշխատաւորներուն:

Ս. Պողոս-Պետրոս մատուռներու նորոգութիւն: Այս մատուռներու նորոգութեանց մասին տեղին ըսած էի, թէ Սուրբ Էջմիածին Եկեղեցւոյ տանիքի համար երկաթեայ հաստ շրջանակներ տեղադրելու համար Մայր Տաճարի հարաւային պատին վրայ անցքեր փո-

⁴ Այս մասին առաւել մանրամասն տե՛ս Բագրատ Վրդ. Պուրճեքեան, Հին խաչքարերու յայտնաբերում Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Սիոն, թիւ 10-11-12, Երուսաղէմ, 2015, էջ 80-93:

րեցին՝ վնասելով պատի մէջէն դէպի Ս. Պօղոս-Պետրոս մատուռներ առաջնորդող աստիճաններու վերի հարաւային պատը: Այս պատի նորոգութեան ընթացքին յարմար էր որ Սուրբ Ստեփանոսի մատրան փոխարէն Ս. Պօղոս-Պետրոս մատուռներն ալ նորոգւին: Կապալառու ինժեներները վերապահումով մօտեցան հարցին, համաձայնեցան Ս. Պօղոս-Պետրոս մատուռներն ալ ներկել: Դժբախտաբար, Ս. Պօղոս մատուռէն Ս. Պետրոս մատուռ անցք-կամարը այդպէս ալ չներկուեցաւ:

Ձմռան օրերն արդէն մօտեցած էին, եղանակն անկանխատեսելի էր: Վերանորոգումներէն յետոյ անհրաժեշտ է ստուգել Մայր Տաճարի եւ միւս մատուռներու տանիքները եւ մանաւանդ անձրեւաջուրերու ճամբաները եւ վստահ ըլլալ որ մաքուր են, խցանուած չեն: Եթէ խցանուած ըլլան, կը վնասեն տանիքը եւ անոր ճեղքերէն ջուրը ներս կը խուժէ: Աշխատաւորները երբեմն իրենց աշխատանքները վերջացնելէ յետոյ տանիքները կանոնաւոր չեն մաքրեր եւ ատիկա խցանման պատճառ կ'ըլլայ⁵:

9 Նոյեմբեր, 2015.- Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ յենարաններ տեղադրած ժամանակ կապալառու Ճորճ Բալուտին եւ ինժեներ-ճարտարապետներուն հարցուցի արդեօք պէտք չէ՞ ծածկել Մայր Տաճարի իւղանկարները: Պատասխանեցին, թէ մեծ նկարներու «քորնիշի» վերի մասէն մինչեւ վար տախտակամած մը պիտի պատրաստուի եւ զայն յատուկ նեյլոնով պիտի պատեն, որպէսզի հին ծեփերու փոշին եւ այլ իրեր չվնասեն իւղանկարները (**Նկ. 16**):

12 Նոյեմբեր, 2015.- Առաւօտեան ժամը 10-ին, Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը, Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան եւ Պատրիարք Սրբազանի գաւազանակիր՝ Տ. Ներսէս Աբեղայ Ալոյեան այցելեցին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար: Պատրիարք Սրբազան Հայրը մօտէն ծանօթացաւ վերանորոգչական աշխատանքներուն՝ նախ բարձրանալով տանիք, ապա հանդիպեցաւ կապալառուի, ճարտարապետի, ճարտարագէտներու եւ անոնց օգնականներու հետ եւ տեղեկացաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի եւ Ս. Էջմիածին Եկեղեցւոյ մէջ իրականացուող աշխատանքներու ընթացքի մասին: Այցի վերջաւորութեան Պատրիարք Սրբազան Հօր ուշադրութեան յանձնեցի կարգ մը հարցեր եւ լուսաբանեցի նորոգութեանց ողջ ընթացքը լուսանկարներով: Յատուկ շեշտեցի շինարարական աշխատանքները հետեւողականօրէն հսկելու կարեւորութիւնը, որպէսզի յետագային թերութիւններ ի յայտ չգան (**Նկ. 17, 18**):

Վերանորոգչական աշխատանքները տեւեցան մինչեւ 21 Դեկտեմբեր, 2015, որմէ յետոյ սկսան լուալ ներքին եւ արտաքին գաւիթները՝ յատուկ ճնշակ (Compressor) մեքենայով:

Ամէնէն կարեւորը Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի, Սուրբ Էջմիածին (**Նկ. 19**) Եկեղեցւոյ եւ միւս մատուռներու ընդհանուր մաքրութեան հարցն էր: Քանի որ Մայր Տաճարի ճարտարապետական կառուցուածքը բարդ համադրութիւն մըն է եւ հոն կան յախճապակիներ, տարբեր չափի իւղանկարներ, խորաններ, խաչկալներ, կանթեղներ

⁵ 1980-ական թուականներուն այդպիսի դէպքերու ականատես եղած եմ. Ս. Էջմիածին Եկեղեցւոյ տանիքը «փօլէ» ծեփով նորոգելէ յետոյ չմաքրեցին: Յաջորդ օրը տեղատարափ անձրեւ եկաւ եւ չմաքրուած խնամաբեր եւ շաղախը պատճառ դարձան անձրեւաջուրերու ճամբաներու խցանման: Տանիքը մօտ 30 սմ ջուրով ծածկուեցաւ, ապա լեցուեցաւ Եկեղեցիէն ներս՝ վնասելով մեծ պահարանը եւ հիւսիսային պատին յախճապակիները: Նոյն ձեւով Սուրբ Առաքելոց մատրան բակ-տանիքի անձրեւաջուրերու ճամբաները խցուեցան եւ մատրան արտաքին արեւմտեան երկաթէ դրան տակէն ջուրը ներս խուժեց եւ Սուրբ Մինասի տանիք-պատուհանէն լեցուեցաւ Սուրբ Մինաս մատուռը՝ քրջելով ամբողջ առաստաղը եւ պատերը՝ վնասներ պատճառելով մատրան, եւ պատերուն վրայ շարուած գաւազաններուն:

րու շղթաներ ու պարաններ, քանդակ խոյակներ, տարբեր յատակներու ծածկոյթներէ բաղկացած գետիններ, դասերու եւ խորաններու բեմերուն՝ խճանկար յատակներ եւ տարբեր ժամանակաշրջաններէ մնացած քարէ եւ մարմարէ յատակներ, հետեւաբար՝ որոշուեցաւ մաքրութեան աշխատանքը վստահել շինարար գործաւորներէ բաղկացած փոքրիկ խումբին: Մաքրութեան աշխատանքները սկսան 24 Դեկտեմբեր, 2015-ին եւ աւարտեցին 2 Յունուար, 2016-ին:

Շատեր կը փափաքէին, որ Աւագ տօները տօնախմբուէին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, սակայն այդ իրականացնելը դժուար էր: Ճիշդ է, շինարար գործաւորներէ բաղկացած փոքրիկ խումբը կատարեց մաքրութեան գործը, սակայն անոնք մասնագէտներ չէին եւ բժախնդրօրէն չմօտեցան մաքրութեան գործին: Հետեւաբար օգնականիս՝ Լեւոն Պօղոսեանի եւ կարգ մը ժառանգաւոր սաներու հետ հնարաւորինս ամբողջացուցինք մաքրութեան աշխատանքները եւ վերադասաւորեցինք Մայր Տաճարի խորաններու զարդարանքները, կախեցինք կանթեղները, փոխադրեցինք եւ փոխեցինք մեծ ու պզտիկ գորգերը, եւ իրենց տեղերը վերադարձուցինք գահերն ու նստարանները:

Մայր Տաճարի եւ մատուռներու իրերու եւ սպասներու վերադասաւորումէ եւ արարողութեանց համար պատրաստելէ յետոյ, Տիրոջ կամքով եւ վանական իշխանութեան որոշումով 15 Փետրուար, 2016-ին, ձեռամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի նախ ջուրով եւ զինիով լուացուեցան Մայր Տաճարի Աւագ խորանը, ձախակողմեան դասին մէջ գտնուող Սուրբ Աստուածածնայ սեղանը, աջակողմեան դասին մէջ գտնուող Սուրբ Կարապետի սեղանը, Սուրբ Էջմիածին Եկեղեցւոյ սեղանը, Սուրբ Սինայի սեղանը, ներքին գաւիթը գտնուող Սուրբ Գէորգի եւ Սուրբ Նիկողայոսի սեղանները, ապա վերածոնկեան սրբալոյս Միւռնոյով (Նկ. 20):

16 Փետրուար, 2016.- Արարողութիւնները վերսկսան ի Ս. Յակոբ:

Ամփոփում

1980-էն ի վեր կը վարեմ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Լուսարարի ծանր եւ պատասխանատու պաշտօնը: Պաշտօնավարութեանս ընթացքին Մայր Տաճարի առօրեային զուգընթաց ուսումնասիրած եմ անոր դարաւոր պատմութիւնը, ծանօթացած եմ ուխտաւորաց նուիրատուութիւններուն եւ թէ՛ Մայր Տաճարի, թէ՛ ուխտաւորաց նուիրատուութիւններու մասին հրատարակած եմ երկու հատորներ⁶:

Մայր Տաճարի արտաքին եւ ներքին տեսքի, խաչկալներու, իւղանկարներու, յախճապակիներու, պահեստներու, պահարաններու եւ այլ նորոգութիւններու հարցը մշտապէս կը մտահոգէր զիս: Այդ մասին քանիցս թէ՛ բերանացի եւ թէ՛ գրաւոր յայտնած եմ վանական իշխանութեան եւ կը խորհէի, թէ մտահոգիչ նորոգութիւնները վանական իշխանութիւնը պիտի իրականացնէր քայլ առ քայլ՝ ամէն տարի բան մը նորոգելով:

10 Յունիս, 2015-ին, Միաբանական Ընդհանուր Ժողովի ընթացքին քննուած Մայր Տաճարի մասնակի նորոգութեան հարցին համաձայն գտնուեցայ Սուրբ Էջմիածին Եկեղեցւոյ անմխիթար եւ մտահոգիչ ըլլալու եւ նոյն Եկեղեցւոյ Աւագ խորանին վրայ գտնուող փոքր զանգակատան անկայուն եւ հիմնական վերանորոգութեան կարօտ ըլլալու պատճառով: Այս Եկեղեցին վնասած է յատկապէս 1927-ի երկրաշարժէն եւ 1948-ի Արար-

⁶ Տե՛ս Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը - Երուսաղէմ, Երուսաղէմ, 2007; եւ Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան, Յիշատակարան սպասուց Սրբոց Յակոբեանց Մայր տաճարի, Երուսաղէմ, 2008:

Իսրայելեան պատերազմէն, որոնց հետեւանքով ճաքեր ու ճեղքեր գոյացած էին տանիքին եւ անձրեւներէն ու ձիւնահալքէն յետոյ մեծ ջրահոսումներ կ'ըլլային եկեղեցիէն ներս:

2015-ին կատարուած Մայր Տաճարի մասնակի նորոգութեանց ընթացքին Սուրբ Էջմիածին եկեղեցւոյ տանիքի մակերեսի մակարդակը բաւականաչափ իջեցուցին, որու հետեւանքով Սուրբ Էջմիածնի խորանի կամարը դուրս ցցուած մնաց, իսկ կամարին քարերը՝ միայն շաղախով ծեփուած: Թելադրեցի, որ ցցուած կամարի քարերը սալածածկեն: Աշխատաւորները մասամբ կատարեցին թելադրութիւնս (**Նկ. 21, 22**):

Յաւօք պէտք է արձանագրեմ, որ 2015-ին Մայր Տաճարի մասնակի նորոգութեանց ընթացքին Սուրբ Էջմիածին եկեղեցւոյ տանիքի հիմնական նորոգութիւնը սրտացաւօրէն եւ բծախնդրօրէն չէ կատարուած, կան բազմաթիւ թերութիւններ: Յատկապէս չեմ կրնար մոռնալ Հոկտեմբեր 19-ի ողբերգական օրը, երբ կարծեցեալ կապալառուն, ինժեները եւ ճարտարապետը եկեղեցւոյ տանիքը ամբողջովին «պէթոնով» ծածկելէ ետք կը յիշեն թէ մոռցած են երկաթէ փոքր սալիկներ տեղադրել տանիքի շորս անկիւնները եւ կը սկսին մեծ գայլիկոնով կտրելով փորել «պէթոնը», կը տեղադրեն այդ երկաթէ սալիկները եւ դարձեալ կը ծածկեն «պէթոնով»: Աւետարանը կ'ըսէ. «Ոչ ոք չի ձգեր նոր լաթի կտոր մը հին հանդերձի մը վրայ, քանի աչն որ անոր լրութեանը համար դրուած է, կ'առնէ հանդերձէն ու պատռուածքը աւելի գէշ կ'ըլլայ. ո՛չ ալ նոր գինին հին տիկերու մէջ կը դնեն. քանի որ տիկերը կը պատռին ու գինին կը թափի եւ տիկերը կը կորսուին» (Մատթ. 9:16-17): Ըսել կ'ուզեմ Սուրբ Էջմիածնի տանիքի այս եղածը կարկտան էր, որն արդէն խաթարում մըն էր շինարարական գործունէութեանց մէջ եւ չի կրնար երկար գոյատեւել:

2018-էն սկսեալ ցօրս Մայր Տաճարի ներքնամասի արեւմտեան կողմի եւ Սուրբ Էջմիածին եկեղեցւոյ արեւելեան կողմի՝ դէպի վերնատուն տանող աստիճաններու վերի առաստաղէն մեծ թափով ծեփերը եւ ներկերը կը թափին:

Թելադրութիւն. Ապագային եթէ վանական իշխանութիւնը որոշէ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարէն ներս (արտաքին կամ ներքին) վերանորոգութիւն կատարել, պէտք է հետամուտ ըլլայ, որ այդ կատարուի ճշգրիտ հաշուարկներով, նախածրագրուած, կանոնաւոր, բծախնդրօրէն, ունենալ արդար, հաւատարիմ, անշահախնդիր, խղճմիտ մասնագէտներ ու գործաւորներ, որպէսզի վերանորոգչական աշխատանքները կարելի չափով անթերի եւ կատարեալ կատարեն, քանզի ճարտարապետական դարաւոր պատմութիւն ունեցող մեր վանքերն ու եկեղեցիները գուրգուրանքի պէտք ունին:

Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի եւ Սուրբ Ստեփանոսի մատրան նորոգութիւններ

Սուրբ Ստեփանոսի մատրան նորոգութեան որոշման մասին առաջին անգամ տեղեկացայ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր՝ Լուսարարապետ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանին ուղղուած 25 Յունուար,

⁷ «Սիոն»-ի 2017 թուականի Յուլիս-Դեկտեմբեր, թիւ 7-12-ի մէջ (էջ 61-63) տպագրուած ճարտարապետ Ֆիլիպ Տահապրիի համառօտ տեղեկագիրը ընդհանուր պատկերը կու տայ Մայր Տաճարի մասնակի վերանորոգութեան աշխատանքներուն, սակայն պարզ հայ ընթերցող մը անտեղեակ մասնագիտական շատ մը եզրերէ՝ բան մը չպիտի հասկնայ: Պրմ. Տահապրի այնպէս մը կը ներկայացնէ կարծիք վերանորոգութիւնը կանոնաւոր եւ կատարեալ կերպով կատարուած է, սակայն, դժբախտաբար, այդ այդպէս չէ, ինչպէս վերը նշեցի բազմաթիւ թերութիւններ եւ սխալներ տեղի ունեցած են: Երկրորդ մասով կը տրուի վերանորոգութեանց առթիւ եղած ընդհանուր ծախսերը համառօտ: Այս եւս ճիշդ չէ. Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի բաժինը առանձին եւ մանրամասնեալ պէտք է ներկայացուի:

2019 թվականի «ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ» նամակի օրինակէն:

25 Յունիս, 2019-ին, ստացայ երկրորդ նամակ մը Տնօրէն Ժողովին կողմէ՝ ստորագրուած Ատենապետ՝ Տ. Սամուէլ Մ. Վարդապետ Աղոյեանի եւ Ատենադպիր՝ Տ. Ներսէս Աբեղայ Աղոյեանին կողմէ, որու մէջ կ'ըսուէր. «25 Յունուար, 2019 թվականի ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ նամակով Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը ձեզի կը տեղեկացնէր, թէ տարւոյս Մայիս 6-27 օրերուն Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարէն ներս պիտի կատարուին մասնակի նորոգութիւններ, եւ յատկապէս պիտի նորոգուի Ս. Ստեփանոսի մատուռը: Յարգ դուք բարի չգտնուեցաք յարգել Պատրիարքական թելադրութիւնը եւ չպարպեցիք Ս. Ստեփանոսի մատուռը, որով պատճառ հանդիսացաք նորոգութեան յետաձգումին:

Նոյն նամակով կը տեղեկացուէր նաեւ, թէ Տնօրէն Ժողովը 25 Յունիս, 2019-ի իր ԼԹ (39) նիստին մէջ դարձեալ անդրադարձած է Մայր Տաճարի նորոգութեանց հարցին, «ինչպէս նաեւ ձեր կողմէ Պատրիարք Սրբազան Հօր նամակը անտեսելուն, Լուսարարապետ Ս. Հօր յորդորները մտիկ չընելնուդ եւ Ս. Ստեփանոսի մատուռը չպարպելու ձեր յամառութեանը» եւ որոշած է.

«ՈՐՈՇՈՒՄ.- Նամակիս թուականէն սկսեալ մինչեւ Յունիս 6 տալ ձեզ վերջնաժամկէտ, որպէսզի պարպէք Ս. Ստեփանոսի մատուռը եւ պատրաստէք այն նորոգութեան համար: Նորոգութիւնը տեղի պիտի ունենայ Յունիս 7-31 օրերուն»:

Նամակի վերջաւորութեան Տնօրէն Ժողովը կը սպառնար. «Զեր յամառութիւնը շարունակելու եւ Ս. Ստեփանոսի մատուռը չպարպելու, ինչպէս նաեւ Տնօրէն Ժողովի այս որոշումը չգործադրելու եւ անտեսելու պարագային ստիպուած պիտի ըլլաք յանձնել Ս. Յակոբեանց Մայր Տաճարի բանալիները»:

2015 թվականին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի նորոգութենէն յետոյ այդ մասին տեղեկագիր մը պատրաստեցի⁸ եւ յանձնեցի Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ Տնօրէն Ժողովի ուշադրութեան:

Ինչպէս նախորդիւ ըսի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի նորոգութեանց ընթացքին շատ թերութիւններ եւ սխալներ կատարուած էին եւ կանոնաւոր եւ հետեւողական հսկողութիւն չէր սահմանուած, մանաւանդ որ սահմանուելիք հսկողութեան մասին շեշտած էի Միաբանական Ընդհանուր Ժողովին մէջ եւ Միաբանական Ընդհանուր Ժողովը հսկողութեան համար մասնաւոր յանձնախումբ մը կազմած էր: Սակայն, դժբախտաբար, վերանորոգչական աշխատանքներու ընթացքին յանձնախումբը պէտք եղածին պէս չգործեց, աշխատանքները ձախողումներով հասան իրենց լրումին: Այս առնչութեամբ դիտողութիւններս նշած էի թէ՛ 26 Յունիս, 2018 թվականի տեղեկագրիս մէջ եւ թէ՛ բերանացի յայտնած էի Պատրիարք եւ Լուսարարապետ Սրբազաններուն, Կալուածոց Տեսուչ՝ Հ. Պարետին, ճարտարապետներուն, կապալառու՝ Ճորճ Պալուտին եւ բոլոր անոնց, որոնք կապ ունէին Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքներուն հետ:

Մայր Տաճարի մասնակի վերանորոգման աշխատանքներու աւարտին պէտք է պատշաճ գնահատական մը տրուէր եղածին, որն այդպէս ալ չեղաւ:

⁸ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մասնակի նորոգութեանց մասին 26 Յունիս, 2018 թվականի տեղեկագիրը 18 Յուլիս, 2019-ին յանձնեցի Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի եւ Տնօրէն Ժողովի Ատենապետ՝ Տ. Սամուէլ Մ. Վարդապետ Աղոյեանի:

Այս վերաբերմունքը, չըսելու համար անտարբերությունը, Մայր Տաճարին հանդէպ ինծի սրտնեղ եւ պորթկուն վիճակի մէջ դրաւ, այդ իսկ պատճառով, երբ ստացայ Սուրբ Ստեփանոսի մատրան նորոգութեան մասին Տնօրէն Ժողովի նամակը՝ փորձեցի ընդդիմանալ, որպէսզի այս մէկը գոնէ կանոնաւոր, ծրագրուած եւ հետեւողական հսկողութեամբ կատարուի եւ պնդեցի, որ նախ փոխուին մատրան հին փայտէ պահարանները նոր մետաղեայ պահարաններով:

Աչքիս առջեւ ունենալով Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի եւ Սուրբ Էջմիածին Եկեղեցւոյ անփառունակ նորոգութեան օրինակը՝ դժկամութեամբ օգնականիս եւ Ժառանգաւոր սաներու օգնութեամբ պարպեցինք Սուրբ Ստեփանոսի մատուռը եւ Մայր Տաճարի մեծ ատեանն ու արեւմտեան մասը՝ նորոգութեան համար:

Վերանորոգչական աշխատանքները սկսան Յուլիս 7-ին եւ աւարտեցան Յուլիս 31-ին: Սուրբ Ստեփանոսի մատրան նորոգութեանց զուգընթաց վերստին ներկուեցաւ Մայր Տաճարի առաստաղը, քանի որ չորս տարի առաջ եղած ներկն արդէն կը թափէր (Նկ. 23):

Վերանորոգութիւններէ ետք, Մայր Տաճարի ընդհանուր մաքրութեան անգնահատելի գործը դարձեալ կատարեցինք ես, օգնականս եւ Ժառանգաւոր սաները: Թող Աստուած օրհնէ եւ վարձատրէ անոնց:

10 Սեպտեմբեր, 2019.- Յետ Երեկոյեան Ժամերգութեան Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Դերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի եւ առընթերակայ Հայր Սուրբերու՝ Տ. Շնորհք Աբեղայ Պալոյեանի եւ Տ. Ներսէհ Աբեղայ Ալոյեանի զգեստաւորուելէն ետք, նախ ջուրով ապա գինիով լուացուեցան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի՝ Սուրբ Ստեփանոսի մատրան երեք խորանները եւ Որոտման որդիներու՝ Ս. Յակոբոս Առաքեալի եւ Յովհաննէս Աւետարանիչի խորանը, ապա ձեռամբ Լուսարարապետ Սրբազան Հօր՝ վերաօծուեցան⁹ (Նկ. 24):

2020 թուականի Մայիսին փոխուեցան Սուրբ Ստեփանոսի հին փայտէ պահարանները նոր երկաթէ բարձրորակ պահարաններով:

Թող օրհնեալ ըլլայ կամքը Ամենակալ Աստուծոյ որ մեզ արժանացուց այս օրուան, ծառայելու Իրեն եւ սպասարկելու Իր տան:

ԲԱՐՍԵՂ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԵՄՏԷՐԵԱՆ

Աւագ Լուսարար Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի

⁹ Տե՛ս «Սիոն», Օգոստոս-Դեկտեմբեր, թիւ 8-12, Երուսաղէմ, 2019, էջ 290-291:



Նկ. 1. Մասնակի նորոգութեանց համար Մայր Տաճարի եւ Ս. Էջմիածին եկեղեցոյ գահերու, նստարաններու, գորգերու փոխադրում դէպի պահեստ



Նկ. 2. Եկեղեցական սպասները, իրերը կարգով սնտուկներու մէջ դասաւորել յետոյ փոխադրուեցան պահեստ



Նկ. 3. Նորոգութեանց համար լարուած երկաթեայ յենակ-տախտակամած Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի արտաքին գաւիթը



Նկ. 4. Նորոգությանց համար լարուած երկաթեայ յենակ-տախտակամած Ս. Էջմիածնի հարաւային պատին՝ Մեծ Բակին կողմէն



Նկ. 5. Ս. Էջմիածնի մատրան տանիքի սալափառերը հանուած և հողը կը պարսպուի



Նկ. 6. Ս. Էջմիածնի տանիքը՝ հողը մաքրուած և «փօլէ» եղած



Նկ. 7. Ս. Առաքելոց մատրան բակի եւ յարակից պատերու նեղֆերու լիցք (ֆհօլէ)



Նկ. 8. Սրբոց Յակոբեանց Մայր Տանարի գմբէթը ներկուած



Նկ. 9. Ս. Առաքելոց եւ Ս. Համբարձման մատուռներու երկաթեայ դռները եւ անոնց վերի ծածկերը փոխուած



Նկ. 10. Մայր Տաճարի պատին մէջ անցքեր ընելու առէն վնասեցին Ս. Պօղոս մատրան փանի մը յախնապակիներ



Նկ. 11. Ս. Յակոբեանց Մայր Տաճարի վերնատան տանիքի սալափառերու վերաշարում



Նկ. 12. Փորուած Ս. Էջմիածնի տանիքին թափուած նոր պէթոնը՝ մոռցուած պողպատէ սալիկներն աւելցնելու նպատակով



Նկ. 13. Մայր Տաճարի հիսխային և հարաւային պատերու ծեփերու տակէն երեւան եկան հին խաչքարեր



Նկ. 14. Զարդարանք Ս. Էջմիածին եկեղեցոյ ատենանի եկեկորական ջահին վերեւ



Նկ. 15. Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի հարաւային արտաքին պատին, Ս. Էջմիածնի տանիքին, հիշդ պատումաններուն մօտ փորագրուած խոշոր խաչ մը՝ այլ փոքրիկ խաչերով, որ նախապէս ծածկուած էր հողով: Նորոգութենէն ետք դարձեալ ծածկուեցաւ հողով և ծեփով:



Նկ. 16. Մայր Տաճարի ներքին զաւիթը նորոգութեանը ընթացքին




Նկ. 17. Պատրիարք Է. Լուսարապետ Սրբազանները այցելեցին Մայր Տաճար՝ ծանօթանալու նորոգութեանը ընթացքին



Նկ. 18. Մայր Տաճարի Ասագ Լուսարար՝ Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան կը լուսաբանէ նորոգութեանը ողջ ընթացքը լուսանկարներով



Նկ. 19. Ս. Էջմիածնի մատրան ներհամասը նորոգութեանը ընթացքին



Նկ. 20. Վերածում Մայր Տաճարի ներքին գալիքը գտնուող Ս. Գեորգյայ խորանի



Նկ. 21. Ս. Էջմիածին եկեղեցոյ տանիքին արեւելեան կողմը նորոգութենէն վերջ: Ճիշդ Ս. Էջմիածնի Աւագ խորանին վրայ գտնուող ցցուն կամարը մասամբ սալափառուած



Նկ. 22. Ս. Էջմիածնի տանիքը, Մայր Տաճարի հարապակի պատուհանին վարի մասը



Նկ. 23. Ս. Ստեփանոսի մատրան նորոգություն



Նկ. 24. Վերածով Ս. Ստեփանոսի մատրան խորաններու